

րուստի հայթայթման խնդիրներով:

1.— Ամբաշէն (Ամալիա) խումբերու պարտադիր աշխատանքներու համար, ցուցակագրուեցան իւրաքանչիւր շրջանին պէտքահան եւ ձեռնհաս անձինք, որոնք պիտի կատարէին զիրքերու ամբացումը, քանդուած զիրքերու նորոգութիւնը, տուներու մէջ հաղորդակցութեան անցքերու բացումը եւ որոշուած փողոցները պատերով կարել եւն.: Ասոնք զիչեր ցերեկ պիտի մնային զիրքերը եւ կը բաղկանային հիւս արհեստաւորներէ, բնաներէ (որմնադիր): Գործի պատասխանատուութիւնը յանձնուած էր հետեւեալներուն՝ Մարոյեան Դաւիթ, Մալեկմէղեան Յարութիւն, Մարութեան Փանոս, Լուսարար Մարգիս, Գարատֆէշեան Վարդան, Աթապէտեան Կարապետ, Մանաւաղեան Սիմոն, Հիւս Օհաննէս, Մեւանցեան Յովհաննէս (քեռի), Բնա Պետրոս, Լալ Պետրոս եւ Դաշտօյեան Մարգիս:

2. Մատակարար Մարմին.— Սա պէտք էր զիրքերու զինուորներուն եւ աշխատողներուն սնունդ պատրաստէր եւ մատակարարէր: Զինուորական Մարմնի կողմէ պատրաստուած ցուցակի համաձայն քաղաքացիներէն պիտի հաւաքէր ալիւր, իւղ, մսացուններ եւ անհրաժեշտ ուտելիքներ: Այս մարմնի նախագահն էր Տ. Յովհաննէս քահանայ Մանուէլեան. անդամները՝ Մահիլեան Մարտիրոս, Աւօեան Պօղոս, Բարադամեան Արա, Այադեան Յովհաննէս, Գասպարեան Սամուէլ, Թարգի Մանուկ, Սարֆօյեան Աւետիս, Մամարջեան Զանիկ, Պանտիկեան Սարգիս, Պաշօ Օհաննէս, Նշանեան Օհաննէս: Օրական կը սպասէր 45 լիտր ալիւր: Չորս հաց-թուխ կանայք եւ երկու խոհարարներ իրենց օգնականներով ամէն օր փոխն ի փոխ կը կատարէին սնունդի պատրաստութեան ծանր գործը անթերի:

3. Բժշկական գործ.— Քաղաքամէջը այս գործին ձեռնհաս եւ պատրաստուած մէկը չունէր: Այդ առթիւ կանխահոգութեամբ Զ. Մարմինը գործին յարմարութիւն եւ սէր ունեցողներէն կազմած էր խումբ մը, որուն պարտադրած էր հետեւիլ Այդեստանի մէջ եղած բժշկական — վիրարութական դասախօսութեանց, հետեւիլ բողոքականաց հիւանդանոցի վիրարութական զեղազորներու ցուցմունքին:

Նոյն նպատակաւ կար անհրաժեշտ դեղօրէնց փոքրիկ պահեստ մ'ալ: Կուռի ընթացքին պատրաստուեցաւ ստանձին հիւանդանոց վիրաւորեալներու համար Իսաջանեաններու ընակարանին մէջ: Ասոնց մնայուն հսկողութիւնը ստանձնեցին խումբ մը տիկիկներ եւ օրիորդներ՝ գլխաւորութեամբ Տիկ. Աննիկ Սարգլասեանի եւ օր. Վանուշ Զրուանդեանի: Իսկ վիրաւորուածներուն անմիջապէս օգնելու եւ նաշելու աշխատանքը կատարեցին՝ Պոլսեցի Մանուկ, Արարեցեան Սուրէն, Նշանեան Ռուբէն, Աքամեան Մելքոն, Շարճեան Սենեքերիմ եւ Տիկ. Մարինա Եղգմարուեան:

4. Զինացործարան.— Նախապէս պատրաստուած զինագործարանը կազմակերպուելով հաստատուեցաւ նոյնպէս Իսաջանեաններու ընակարանի մէջ, որ համեմատաբար ապահով յարմարութիւն ունէր: Գլխաւոր վարպետներն էին՝ Պանիկեան Արրահամ, Կալամբարեան Մարգար եւ Գրիգոր, Իսաճանեան Սաչիկ, Պանճեան Գարեգին, Գուլումջիպաշեան Գարեգին: Ամբողջ կուռի ընթացքին ասոնք խանգարուած զէնքերը յաջողութեամբ կը շտէկէին եւ գլխաւորապէս վամփուշտ կը հասցնէին: Աւելի քան 12,000 զանազան լեցուած փամփուշտով օժանդակեցին:

5. Օգնութեան գործ.— Աղքատ դասին, Հայկախանքի կարօտեալներուն օգնելու աշխատանքը ստանձնեց Եզնիկ վարդապետը եւ Մատակարար Մարմնի հետ գործակցաբար կատարեց: Անոր տրամադրութեան յանձնուեցաւ կառավարական ամբարէն գրաւուած 40 չափ դարին եւ 60 չափ տարեկան, նաեւ պէտք եղած, շաքար, ալիւր: Զինուորներու ընտանիքները նոյնպէս կը ստանային իրենց սպրուստը անթերի:

6. Դերձակահագ.— Զինուորներուն հագուստներ պատրաստելու, ինչպէս նաեւ ձերմակեղէններ հայթայթելու համար՝ Թէքալլիֆի Հարպիյէի մէջ գտնուած կառավարական սպրանքեր եւ ամիրքաններ յանձնուեցան զերձակներու խումբի մը: Անոնք կարեցին հագուստներ, որոնք բաշխուեցան զինուորներուն անխոր: Գլխաւոր աշխատող զերձակներն էին՝ Հաճի Հայրապետ (Սէրօ), Վարդապետեան Իզնատիոս եւ Ալեմեան Միքայէլ:

(Շարունակելի)